

ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՆԿ

Տարեկան դեր 5 բուր, կես տարվանը 3 բուր:

Քիֆիլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում:

Օտարաբարոյաբանը դիմում են ուղղակի
Tschauz, Ledakya in Muaka.

Խմբագրատանը բայ է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզվով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառից մի կօպէկ:

ԾԱՆՈՒԹՈՒՄՆ

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը խմբագրատանը
խնդրում է այն բաժանորդներին, որք մինչև
այսօր իրանց տարեկան գինը ուղարկած չեն,
հասցնել խմբագրութեանը «Մշակի» տարեկան
վճարը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծանուցում:—Գ ու ղ ս ի ս վ ու մ է ք:—
Ն եր ք ի ն տ ե ս ու թ իւ Ն: Գ իւ ղ ա ն տ ե ս ու թ իւ Ն,
Ք ի ֆ իլ ի ս ի ա լ տ ր ա կ ա ն ք ա ն ի: Ն եր ք ի ն լ ր յ եր ք:—
Ս եր ք ա ք ի ն տ ե ս ու թ իւ Ն: Գ իւ ղ ա ն ի ա և Է լ:—
Ս եր ք ա ք ի ն լ ր յ եր ք:—Յ այ տ ար ար ութ իւ Ն:—
Ն եր ք:—Տ Ե ղ ի կ ար ց ց ց:—Բ ա ն ա ս ի ղ ա կ ա ն: Որ
տ ար ակ ա ն կ ե ա ն ք ի ց:

ԳՈՒԲ ՄԻԱՎՈՒՄ ԷՔ

Մի որ և իցէ հարց անաչառ կիրպով քննե-
լու համար, հարկաւոր է նախ և առաջ հա-
ւաքել պատրաստական նիւթեր, հարկաւոր է
ամեն կողմից նայել հարցի վրա, նրան բաղ-
մակողմանի կիրպով քննել...

Մտալով են նրանք, որք մեղադրում են
«Մշակին» իր թէ նա հայ-հոգեորակա-
նութեան հարցը բարձրացնելով, միակողմանի
և կողմնապահ հոգեորակութեամբ քննել է այդ
հարցը:

Մտալով են նախ, որովհետև «Մշակը»
երբէք չէ յարձակվել հոգեորակական ու-
թեան դէմ, ուրիմն ոչ թէ ինքն հիմար-
կութիւնն է քննադատել, այլ այդ դասին
պատկանող այս կամ այն անդամի, անձի արած
գիծուցները: Մեր լրագիրը խօսելով հոգե-
ականութեան մասին, միշտ աչքի առաջ է
ունենել մի քանիսներին, հոգեորակաւորութեան
մի մաս, գուցէ և մեծ մասը,—բայց երբէք
չէ խօսել ընդհանրապէս:

Բնորոշութեամբ խօսելով, մենք, ճշմարիտ է,
առաջարկել ենք այս կամ այն փոփոխութիւն
հոգեորակաւորութեան կազմակերպութեան մէջ,
—բայց միթէ՞ առաջարկել մի որ և է փոփո-
խութիւն որ և է հասարակական դասի կազ-
մակերպութեան մէջ, մանաւանդ, կըր փոփո-
խութիւն առաջարկողը խոր համոզված է որ
ոչ դէպի վատը, այլ դէպի լաւն է առաջար-
կում այս կամ այն վերամոտոլութիւն, միթէ՞
այդ նշանակում է թէ նրան թշուառ պիտի

համարել այն հաստատութեանը, որին նա
առաջարկում է վերամոտոլութիւն...

Մենք առաջարկած ենք շատ և շատ բա-
նորում վերադառնալ սկզբնական, մաքուր լու-
սաւորչական եկեղեցուն, սրբութեամբ պահ-
պանել մեր հնադարեան եկեղեցական ընտրու-
ղական սկզբը,—ապացուցեք որ մենք սխալ-
վում ենք...

Մենք առաջարկած ենք որ ժողովուրդը
հոգայ այն բանի վրա, որ մեր քահանայիքը
ոչ թէ մտաւորական լինեն, այլ որպէս եկե-
ղեցական և մի և նոյն ժամանակ ժողովրդա-
կան պաշտօնեաներ՝ ապահոված լինեն հաս-
տատ ուժերով: Մտալով կը լինէիք, եթէ
կարծէիք, որ այդ վնասակար է:

Մենք կրկնում էինք անդադար, որ քահա-
նայի համար, մանաւանդ գիւղական քահա-
նայի համար, աւել յարմար է միջին ուսում-
նարանի ուսումը, և այդ ուսումը ստանալով,
նա աւել մօտ կը լինի ժողովրդի դրական,
ամենօրեայ պիտոյքները ընդունել և նրանց լը-
րում սույ, քան թէ աստուածաբանական
բարձր, ձեմարանական ուսում, որ բաժանե-
լով քահանային իր հոված ժողովրդից մի
անանցիլ անդունդով, կրբէք չէ կարողանայ
կապի սերտ կապերով քահանային այն ժո-
ղովրդի հետ, որ հայի ինքրի վրա է մաս-
նում, որ ապրում է օրական, թէև մանր,
բայց նրա համար կենսական խնդիրներով...
Պոք կարծում էք որ մենք սխալվում ենք,—
իսկ մենք կարծում ենք որ դուք էք սխալ-
վում:

Հաստատելով այն իրողութիւնը, որ այժմ
աշխարհակամները աւել զարգացած են մե-
զանում, քան թէ հոգեորակաւորները, մենք
միակ ելք ենք գտել այդ անբնական դրութե-
անց, առաջարկելով որ հոգեորակաւորութեան
կոմսեր պատրաստվող նոր սերունդը կրթվի
լուսաւորված աշխարհակամների ձեռքով...
Պոք չէք հաստատում մեր առաջարկութե-
ւր... դուք ստատիկ սխալվում էք:

Պոք մեղադրում էք մեզ, որ մենք կողմ
նապահ ենք մեր դատողութիւնների և հի-
տադատութեան մէջ մեր հոգեորակաւորութեան
հարցի վերաբերութեամբ, դուք մտանցոյց էք
անում, գուցէ, այն անթիւ իրողութիւնների
վրա, որոնց մենք անդադար տպում ենք և որ-
տեղ մեր հոգեորակաւորութեան պատասխութիւն-

ներ են կրկնում, այն յօդվածների վրա որք
ներկայացնում են մեր հոգեորակաւորութեան
միջոց ոչ գովիլի տիպերը,—բայց մենք տը-
պում ենք այն նիւթերը, որ ինքն ժողովուրդն է
ներկայացնում մեզ, որ հայ հասարակական
կարծիքի արտայայտութիւնն է... Պոք սխալ-
վում էք, եթէ կարծում էք, որ վատ ու լաւը
նոյն քանակութեամբ է ներկայանում մեր ըն-
տրողութեանը,—ոչ, վատը գերակշռում է լա-
ւից...

Եթէ մի կողմից մենք տպել ենք քանի մի
անգամ անարժան հոգեորակաւորների տիպերը,
եթէ տպել ենք Վ. Կոպի Պորոս վարդապետի
հրէշաւոր գործունէութեան նկարագիրը,—
ուրիշ կողմից տպել ենք և Խորհմանի հա-
մակիրի կենսագրութիւնը... Եթէ անդադար
քահանայներից շատերի անարժան վարմանը
վրա մտանցոյց ենք արել,—ուրիշ կողմից եր-
բէք չենք միտել տպել այն տեսակ քահանայի
կենսագրութիւնը, ինչպէս ամբողջ Շ. ու շի բա-
ղարից պաշտած նոր վախճանված ծերունու
կենսագրութիւնը... Եւ հակասութիւնը ընթացողին
աւելի շոշափիլ անկու համար, մինչև ան-
գամ մի և նոյն համարում (տես № 10) աը-
պիլ ենք կրկնու ծայրայեղ տիպերը՝ անարժան
և արժանաւոր հոգեորակաւորներ...

Եթէ դուք անաչառ կիրպով քննէք թէ
անցեալ տարիների, թէ այս տարվայ մեր գոր-
ծունէութիւնը, դուք կը տեսնէք որ ձեր մե-
ղադրանքը մեր դէմ ՚ի զուր են, կը համոզ-
վէք որ դուք սխալվում էք...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՒԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

«Մշակի» 6-րդ համարում ազգացու Ս.
Կալ ստորագրութեամբ յօդվածը, որտեղ մենք
գտնում ենք շատ օգուտէս տեղեկութիւններ
կողմնաւոր անասունների պահելու մասին:
Անասունների վերաբերութեամբ Լեւոպոլսում
ընդունված մանր հոգանքը մեր գիւղացուն
ձանօթ չեն բոլորովին: Մեր գիւղացին հա-
ղու ինքն իր անձի և իր ընտանիքի մասին
հոգում է,—ուր մնայ որ հոգայ անային կեն-
դանիների մասին: Բաւական չէ այն, որ մեր
գիւղացին անդադար տանջում է անասունին.

պահում է նրան ամենակիրտոտ և անպիտան
կիրպով, որի պատճառով անասուններից շա-
տերը ենթարկվում են զանազան հիւանդու-
թիւններին,—բայց և անասունների կերակրելը
անդամ մեղանում անխնոն է, և բացի սու-
րանից, մեր գիւղացին ուշադրութիւն չէ
գարձնում որ կերակուրը լինում է շատ ան-
գամ վնասակար:

Անասունների հիւանդութիւնների մեծ մասը
գիւղացին չէ ընդունում որպէս անառողջ կե-
րակուրից առաջացած, այլ հիւանդութեան
ճագումը մեկնում է կամ ուրիշ տեղից փո-
խարկված լինելով, կամ զանազան սնտոխա-
պաշտ մտքերով...

Եւ մտաւորված կարծիքները փարատելու
համար, օգուտակար ենք համարում խօսել այդ-
տեղ մի նոր միջոցի մասին անասուններին
առողջ կերակուր առաջարկելու, հետեւապէս
և նրանց առողջ պահելու: Իսկ կենդանիների
առողջ լինելը մեծ նշանակութիւն ունի և
մարդու առողջապահութեան համար:

Գիտութիւնը, հետազոտելով անասունների
հիւանդութիւնները, հասել է այն կրակա-
յութեանը, որ այդ հիւանդութիւնների մեծ
մասը առաջանում է անասունների մէջ վնա-
սակար խտ ու տեղուց: Իսկ խտի վնասակա-
րութիւնը նրանից է լինում, որ խտի մէջ
գոյանում են միկրոօպիկական փոքրիկ միջաս-
նոր, որք արագութեամբ բազմանալով վատ
չորացրած խտի մէջ, ընդունվում են անա-
սուններից կերակուրի հետ միասին, և ներ-
գործում են կենդանու թէ արիւնի հոսանքին,
թէ նրա շնչառելու խողովակի վրա: Եւ յ
միջատները գոյանում են խտի մէջ, կըր խտը
կամ վատ չորացրած է, կամ խոնաւ տե-
ղում է պահվում: Եւ յ վնասակար միջատները
ոչնչացնելու համար առաջարկում են հետեւեալ
կիջոյցը:

Խտի տեղը լինելով խոնաւ տեղ, կամ մի
որ և իցէ պատճառով կակածանքին կեղտա-
րիկ,—պէտք է այդպիսի խտին հասարակ ծը-
խախտի ծուխ տալ (ի հարկէ ծխախտի
կրակից զուտութեամբ բարձր բաժնով խտի
խտը): Ծխախտի ծխի ներգործութեամբ
խտի մէջ եղած բոլոր միկրոօպիկական մի-
ջատները շուտով դուրս են սողում խտի վրի
կողմը և հաւաքվում են միատեղ: Եւ յսպիտով
կարողացան փարձրը անել, զանալով խոշորա-

կրամ կաքաւ, աղանիք, բայց դոցա քանակու-
թիւնը ոչինչ էր համեմատելով լորի հետ, որ մենք
թուցում էինք համարեա ամեն քայլախտում:
Այդ բանը ոչ միայն թ. գիւղի մօտ է նկատվում,
այլ ամբողջ կովկասում, բացի Քիֆիլիքի շրջա-
կայքից, որտեղ բնութիւնը վաղուց արդէն փո-
խել է իւր պատկերը...

Երկրորդան ժամանակը ես նկատեցի, որ մենք
արդէն բաւական հեռացել ենք գիւղից, բայց ա-
ռաջին գիւղերը այնպէս համ էր թողել բերանունս,
որ ես վճռեցի, ինչ և պատահէր, այս գիւղերը գիւ-
ղումն անցկացնել: Իմ միակ յոյսս էն էր, որ ես
գիտէի գիւղի քահանայի անունը, ուրիմն և կա-
րող էի ձանօթ համարել: Գործով ես մի
կողմից կաղապարէի գիւղացուց հաւանքներ, և
միւս կողմից սաստիկ ցանկանում էի երկրորդան
հովին չայ խմել, իսկ այդ շաղկապութեամբ գիւղե-
րում առ հասարակ միայն աչքերն է թող տա-
լիս իրան: Գեռ գիւղին չը հասած քսանի չափ
չներ դուրս թափուցանա և մեծ հանդիսով ու ե-
րաժշտութեամբ ներս տարան ինձ գիւղը, որտեղ
մի նոր խումբ էլ ընդ առաջ դուրս եկաւ ինձ,
դրանց դէմ ես պաշտպանուցից հրացանի կօթով,
իսկ դոցա հետեւող գիւղացուց դէմ ես աւելի զօ-
րեղ թալիսման ունէի, այն է՝ տեղ հօք անունը,
որ և ինձ անվնաս անդ հասցրեց:

ԲԱՆՍՍԻՐԱԿԱՆ

Օգոստոսի երեքին մենք ճանապարհ ընկանք
դէպի Թ. գիւղը լրբ որսալու համար, Լորը այն
զաղթական թուղաներիցն է, որոնք երևում են
Անդրկովկասում գարնանը: Առաջին լորերը ծի-
ծեանակների հետ միասին երևում են ապրիլի
սկզբում և մօտ երկու ամիս մնալուց յետոյ շա-
րունակում են իւրեանց ճանապարհը դէպի հիւ-
սիս: Նոքա կրկին վերադառնում են սեպտեմբերի
սկզբին: Իսկ ոտքոտ և բարձր տեղերում նոքա
մնում են ամբողջ ամառը և ձագեր են հանում:
Այլի առաջ ունենալով այդ հանգամանքը, մենք
ընտրել էինք Թ. գիւղը, որի գիւղը բաւական
բարձր է թիֆլիզից: Առաջին օրուայ փորձը ցոյց
տուցեց մեզ, որ մենք որքան կարելի է գիւղից հե-
ռու մանգայինք, որովհետև գիւղացիք արգելում են
որսորդներին չը հնձած արտերի մէջ մանգալ և
զորա համար պահապաններ ունեն կարգած, բայց
այդ զեռ ոչինչ, գիւղացիքը այնքան խիստ չեն նա-

ՈՐՍՈՐԳԱԿԱՆ ԿԵՆՆԻՔԻՑ

յում որսա վերայ և մանաւանդ մի բաժակ գինով,
մի շամփուր խորովածով և մի քանի գցելու (ա-
թում) վաւորով պահապանի խղճմանը կարելի է
այնպէս քննել, որ ամբողջ օրը չի դարձնի,
բայց մեր տարաբարոյութիւնից ուրիշ աւելի հիմ-
նաւոր պատճառ կար վախճանալու: Փոքրիկ Թ.
գիւղում մի ցաւ էր յայտնուել և ութ օր շարու-
նակ օրը մի մարդ էր մտել: Գիւղացիք ինչորի էին
տէրաէրին հսկումն անել, բայց տեսնելով, որ այդ
չի օգտում, հաւաքուել էին քեօխլի մօտ խորհուրդ
անելու համար, էլ խորհուրդը քեօխլի նախա-
գահութեամբ վճռել էր, որ անպայտ ցաւի պատ-
ճառը որսորդներն են և այդ պատճառով քեօխլին
խտիւր հրամայել էր, որ ինչ որսորդ տեսնեն՝ հը-
րացանը իրեն և քաջտան իւր մօտ: Որովհետև
մեղանից ոչ ոք չէր ուղում իւր հրացանից բա-
ժանուել, վճռեցինք գիւղերը անտառումն անցկաց-
նել: Գորա համար ընտրեցինք յարմար տեղ, այ-
նիքն մի խոր ձոր, որի յատակից բղխում էր աղ-
բիւր: պատրաստեցինք ամբողջ գիւղերուայ համար
փայտի պաշար և մի կողմից վաւորով ձգուցինք
չորս կողմը: Մեղանից փոքր ինչ հեռու որսուած
պաւակած էին շները, որոնք ամեն արթնութեամբ
հսկում էին մեզ: Ուղիղ գլխիս մօտ բարձրանում էր
մի պանտի ծառ, որի կապած ձիւղերը մինչև բե-
րանս էին հասնում և ես առաւօտեական մարդու

իրան բուն գերմանական մի երկիր, որ երկու հարիւր տարի առաջ նրանից խլած էր ծրանստիւնը...

Բայց մեզ կանոն դիցուք թէ Լազարոսի ազգով բուն գերմանացիք են, բայց ի՞նչ իրանի իրանց համարում են Ֆրանսիացի, ո՞վ ինչ կարող է սանկ, մի՞թէ կարելի է նրանց ստիպել գերմանացի լինել...

Բնորոշումը օգտի, և մի ազգութեան մուրոված մասի օգտի համար կարելի է, այո՛, ստիպել մի ազգի անգամներին վերադառնալ իրանց հայրենիքը:

Բայց ստույգ են՝ եթէ էլ իրանցից զբաղված էր ծրանստիւնով, ոչ ոք մեզուր չէ... այդ ցոյց է տալիս թէ որքան համակրական է ծրանստիւնը...

Բայց ստանկեք արգիւք չը կային այդ համակրութեան տակ և ստոր գագնձներն:

Լազարոսից զգացմունքով գաւառն էր հայրենիքի, որովհետեւ այն ժամանակն էր համակրում ծրանստիւնը, երբ սա հզոր էր և ուրանում էր իր ազգութիւնը, գերմանական ազգութիւնը, որովհետեւ նա թոյլ էր, բաժանված էր, բազարականապէս որդիւնը գրութեան մէջն էր: ծրանստիւնը գրաւել Լազարոսի հասարակական բոլոր դասերը այլ և այլ միջոցներով: Ազնուականները գրաւվեցան աստիճաններով և պատուանշաններով, բուրժուազներն բաւական էր որ իր փողով կարող էր ազատ լինել զինուորական պարտաւորութենից, երկրասարքութիւնը գրաւված էր այն դարպակ խօսքով որ ծրանստիւնը դիտարկել էր՝ ծրանստիւնը փառքը: Կա յարկաւորված էր Ֆրանսիական ազատութիւնը բառով, որ միշտ կրկնվում էր բերանից բերան, թէ և կրպակէս չը կար և չէր գործ դրվում... Վերջապէս ժողովուրդը, որի մեծ մասը Լազարոսում կաթօլիկ է, համարում էր իրան Ֆրանսիացի, որովհետեւ կաթօլիկ է, զրկած լինելով կաթօլիկ հոգևորականներից, որք սերմանում էին նրա մէջ մոլոնանդութիւնը գէպի բողոքականութիւնը, ուրիմն և գէպի Վերմանիա...

Ինչ որ վերաբերում է այն բանին, որ Վերմանիան միացրեց իրան Լազարոս և Լազարոսի դիտարկումը առանց ժողովրդի կարծիքը հարցնելու, սա մի կրաւարական խնդիր է: Արդո՞ք էր չընդունել պատերազմը, այդ ուրիշ բան է, բայց մինչև որ պատերազմը կայ, նա ունի իր իրաւունքները:

Երբ որ խաղաղութեան ժամանակ մի երկիր միանում է ուրիշ երկրին, այն ժամանակ հարցնում են ժողովրդի կարծիքը ընդհանուր շայնառութեամբ, բայց պատերազմը, մինչև որ ձանաչված է, հարկաւորութիւն չունի այդ միջոցներին:

Ֆրանսիական ցլօրե (փառք) խօսքը նոյն պատերազմական ոյժ է՛ր... ինչի՞ էլ իրանցիք յարկաւորված էին այդ գաղափարով մինչև որ նա Ֆրանսիական էր, ինչի՞ ուղեւորված համակրութեամբ նայում էին, երբ Կաթօլիկները զօրքը կոպիտ կերպով միջամտութիւն անելով Լազարոսի մէջ, զենքով պաշտպանեց վերջին տարիները Լազարոսի պապի հնադարեան, հրէշտ որ բունաւորութիւնը ընդդէմ խաղաղան ժողովրդի, որ ուզում էր ազատվել այդ բունաւորութենից: Ինչի՞ այնտեղ բուռնութիւն չաւրին՝ ու՛մ կամեւում է պատկանել խաղաղան ժողովուրդը...

Գ. Ա.

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Գ. Ա. Միլիք Շահազարեանը մեզ ուղղած նամակով ներքում է այն լուրերը, որք անցնալ տարվայ «Մշակի» 51 համարում տպվել են Շահազարոս առաջնորդի մասին:

Գ... քաղաքից ոչ հեռու Խ... գիւղի քահանան մեծ մասամբ քաղաքի փողոցները չափափում է անպէս որ զիւղացիք ստիպված են իրանց մեռնալիքը անհարգելու և առանց քահանայի թաղելու: Կոմսարտիստի ուղղած բնակիչներից գանգաւորները մինչև այժմ անուշադիր թողած են:

Գ... գիւղի քահանան ամենցունց սպառնում է, ով որ ասում է, թէ ստատանայ չը կայ, «Եթէ կուտաս կը ինձի... մանթ, ասում է տէր հայրը, ես քեզ ամեն տեսակ ստատաններ ցոյց կուտամ կը...»

Այս ձմեռը ամեն տեղ սաստիկ ցուրտ է եղել, օրինակ և Ախալքալաք, որտեղ, ինչպէս մեզ հաղորդում են, փետրվարին ձիւնը երկու արշինի չափ խորութիւն ունէր, ջերմապահը ընկել էր մինչև 25 սասիճան զօրից ցած: Ասում են որ երկու մարդ սառեցան գիւղի ճանապարհում:

Վրաց Գրօթբառ լրագիրը գրում է՝ մինք լսեցինք, որ թիֆլիսի արտուստորների փոխառու և ինչայոզական կասախի կանոնադրութիւնը այս կարճ ժամանակներում հաստատված կը լինի տեղական կառավարութենից:

Նոյն լրագրում կարդում ենք, որ վրացի մի պարոն աշխատում է կազմել վրաց գերասանա-

կան խումբը, դիտաւորութիւն ունեւով արդէն սեպտեմբեր ամսից կանոնաւոր ներկայացումներ սկսել:

Երևանից մեզ գրում են, որ այնտեղ ձմեռը շատ ցուրտ է եղել, փայտը և գործիքն թանգ, հիւանդները և մեռնողների թիւը աւելի, իսկ առևտուրը թոյլ գրութեան մէջ:

Նոյն տեղից մեզ հաղորդում են, որ Ք... գիւղի Կ. ծիառէր քահանայը դրամական հայրենիքի պատճառով սաստիկ բարկացել են և սկսել են միմեանց գաւազանով ծեծել... քահանայի փրկօնները խլել են:

Մեզ գրում են Զաքարիայից, որ այնտեղ 1862-ին բացված արքունական ուսումնարանում հայոց լեզուն չէր մտցրել, բայց Յովնան քահանայ Աղոլիանցը առաջարկել է ուսումնարանի կառավարութեանը ձրի դաս տալ և նորա առաջարկութիւնը ընդունվել է: Այժմ քահանան հրաժարական է տուել, իսկ ուսումնարանի կառավարութիւնը վարձել է հայոց լեզուի համար վարձպետ մէկ տիրացու:

«Allg. Ztg.» լրագրին գրում են Կ. Պօլից, որ փետրվարի 26-ին Բարձր. Գրան առաջ կարգացվեցաւ մի ֆերման, որ Գինդր-Օղլու Բուզանդին հասունանների վէճի (ներկայացուցիչ) է նշանակում: Այսպիսով կառավարութիւնը պաշտօնապէս ճանաչեց իր առաջվայ վէճը և մերժեց ֆրանսիական անդալտիստի գրգռումը: Նկատելու արժանի է, որ ֆերմանը հասունաններին չէ ճանաչում իբրև մի միլիէտ (այսպէս են անուանվում անհատական կրօնական համայնքները) այլ անուանում է նրանց տաբիւմ (կուսակցութիւն), մինչ որ նոյն պաշտօնագրի մէջ հակահասունանները յիշած են իբրև կաթօլիկներ և բիլիէտ: Նոր նշանակված վէճի յանձնաձեռն է հասունանների աշխարհական գործերը վարելը:

Փետրվարի 21-ին 365-դ անգամ էր արվում Փարիզի մի թատրոնում «La fille de madame Angot» ծագրական պիեստա: Բնուակները մինչև այժմ այս պիեստայի ներկայացումներից հաւաքվեցաւ 1,519,112 ֆրանկ և 65 սանտիմ այսինքն 400,000 բուրլից աւելի, ուրիմն ամեն մի ներկայացումն սուսե աւելի քան 1200 բուրլ:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հայ թատրոնական ընկերութիւնը ստացել է թոյլատուութիւն թատրոնների ներկայ կառավարիչ պ. Լարօշիկից կող ապրիլ ամսից մինչև մայիսի մէջը տալ 3 կամ 4 հայերէն ներկայացումներ ձեռնային թատրոնում:

Որոշում են ներկայացնելու: ԿՈՂՈՊՏԱՄ ՓՈՇՏ

Գրամայ 5 արարուածով և 6 պատկերով թարգմանութիւն պ. Մլորմանցի:

ՊԱՌԱՒԷ ՀԱՆՍԱԲ Է ԱՆՈՒՄ Վ. Օրէվիլ մէկ արարուածով հեղ. պ. Ա. Վ. ՎԱՐԳԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Պատմական դրամայ 3 արարուածով և 5 պատկերով հեղ. պ. Կորնիանցի:

ԱՂԲԱՏԱՏԱՄ ԱԶՆՈՒԱԿԱՆ Կոստիկայ 5 արարուածով թարգմ. պ. Ա. Բարանկանցի:

Այդ խաղերի միջոցով Տ. Սարգիսիկը պատրաստուած խաղերից որպիստ պ. Սոսկոյի կը երգէ:

Տրօլտուրից «Ողորմիկ ապրում էի» (Ivi Poveri vivea) և «Օյիճեւանկ»:

Գ. Ա. Մանդիլանցը խնդրանք ընկերութեան կը շարունակի օգնել Հայ բնին իւր խաղով:

Սր մասնակցին առջին անգամ պ. պ Ասիւրազնացի և Արիանց:

Բազուայ Հայոց մարտասիրական ընկերութեան գրաւածաւանդում ծախվում են պ. Մ. Օհհարանցի յիտազայ դրատոր աշխատասիրութիւնները յօգուտ աղբատաց

- 1) Գիտութիւն շնորհաց 40 կ
2) Վէպը դուրսաւալի անցից 45 »
3) Քանի մի խօսք հուովմէական եկեղեցոյ զիւտաւորութեան մասին 30 »
4) Շիրանան կայանաւոր 20 »
5) Պարագոյ ժամը և բ մասն 2 ա. (բ մասը մամուլի տակ է և շուտով լրջ կտեսնի)
6) Նուէր ուղղափառ քրիստոնեաներին ա. մասն 50 »
7) Անբաղ Սանդուխտ Աղուանցի ա և բ մասն 1 ա. 20 »
8) Յուսակ յիշատակարանի Մ. Չ ա մասն 60 »

ԴՈՒՐՍ ԵԿԱԻ Բաժնիկի «ՓՈՒՆՁԻ» 1 Հատորը (Բանաստեղծութիւններ)

Ծախվում է «Մշակի» խմբագրութեան մէջ: Օտարաբարացիքն կարող են դիմել նոյն խմբագրութեանը, յայտնելով իրանց հասցէն Գինը 1 լուր: 50 կոպ.

Table with multiple columns: ՄԱՐՏԻ 20., Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց, ԹԻՖԼԻՍ. 1874. Columns include names, dates, and various numerical data points.